Ամփոփելով

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ հիմնադրամի

2019 թ. գործունեությունը

1. Գիտահետազոտական աշխատանքների ուղղությամբ գրանցվել են հետևյալ հիմնական արդյունքները.
   - Տպագրվել են ՀՑԹԻ «Ցեղասպանագիտական հանդես» պարբերականի 2018 թ. երկու և 2019 թ. հերթական համարները: Թարմացվել են ամսագրերի խմբագրական կազմերը: Հանդեսի հոդվածները հավուր պատշաճի գրախոսվել են, պահպանվել են հրատարակման և հղումների պահանջվող միջազգային նորմերը,
   - Անգլալեզու հանդեսը՝ “International Journal of Armenian Genocide Studies” վերսկսել է իր համարների թողարկումը երկամյա ընդմիջումից հետո,
   - Աշխատակիցների կողմից տպագրվել է 33 գիտական հոդված, որից 8-ը միջազգային հանդեսներում,
   - Աշխատակիցները մասնակցել են 20 միջազգային և 4 հանրապետական գիտաժողովների,
   - Կազմակերպվել է երկօրյա միջազգային գիտաժողով՝ «Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.» խորագրով,
   - Մեկնարկել է Ցեղասպանության զոհերի և վերապրողների, հուշագրությունների և տեսաձայնագրությունների շտեմարանների ստեղծման ծրագիրը,
   - Գիտական մշակման են ենթարկվել ֆոնդերում առկա 35 անտիպ հուշագրություն: Նախատեսվում է հուշագրությունները տպագրել մատենաշարով:
2. Գիտակրթական աշխատանքների ուղղությամբ գրանցվել են հետևյալ հիմնական արդյունքները.

- Իրականացրել է եռօրյա ամառային դպրոց հայոց պատմություն դասավանդող երեք տասնյակ ուսուցիչների համար։
- ՀՅԹԻ գիտաշխատողների կողմից կազմակերպվել է Երևանի և մարզերի միջին և ավագ դպրոցի աշակերտների համար 13 դասախոսություն-քննարկում։
- Կազմակերպվել է 19 մեթոդաբանական սեմինար օտարերկրյա և հայաստանցի մասնագետների մասնակցությամբ։
- Վերսկսվել է Ռաֆայել Լեմկինի անվանական կրթաթոշակի տրամադրումը, որը նախորդ տարի դադարեցվել էր ֆինանսական պատճառներով։

3. Գիտացուցադրական աշխատանքների ուղղությամբ գրանցվել են հետևյալ հիմնական արդյունքները.

   Կազմակերպվել են հետևյալ ցուցադրությունները.

   - «Հայոց ցեղասպանության 150-ամյա վկաները. Կոմիտաս Վարդապետ և Հովհաննես Թումանյան»,
   - «Հայոց ցեղասպանության փոքրիկ վերապրողները. դրվագներ»,
   - «Ժանսեմ. Մեծ եղեռնի գեղանկարիչը» (մշտական ցուցադրության մաս),
   - «Հայրենիքից հեռու, հայրենիքում. հայ ռազմիկների ճակատագիրն Առաջին աշխարհամարտում» (համագործակցությամբ Զալցբուրգի համալսարանի Քրիստոնյա Արևելքի հետազոտությունների կենտրոնի հետ),
   - «Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թվականներին. ազգային միասնությունից դեպի վերածնունդ»,
   - Պոնտոսի հույների ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված եռօրյա ցուցադրություն,
   - Թանգարանն ընդունել է 42 պաշտոնական պատվիրակություն (Հիշողության պուրակում տնկվել է 12 անվանական արծաթափայլ եղևնի), 97.563 այցելու, կազմակերպվել է տարբեր լեզուներով 2.405 էքսկուրսիա։

4. Գիտաֆոնդային աշխատանքների գծով գրանցվել են հետևյալ հիմնական արդյունքները.
   - Գիտական ֆոնդերը համալրվել են 1.886 ֆոնդային միավորով,
   - Գիտական գրադարանը համալրվել է 384 միավորով,
   - Թվայնացվել է գիտական ֆոնդերում գտնվող 1156 լուսանկար, 7 անտիպ հուշագրություն (1588 էջ ծավալով), գրաշարվել է ևս 5-ը:
5. Միջազգային համագործակցության գծով գրանցվել են հետևյալ հիմնական արդյունքները.
   - Եռակողմ պայմանագրի կնքում Camp des Milles հիմնադրամի *(La Fondation du Camp des Milles – Mémoire et Éducation)* և Բուշ դյու Ղոն դեպարտամենտի խորհրդի *(Le Conseil Départemental des Bouches-du-Rhône)* մասնակցությամբ,
   - Պայմանագրի վերակնքում Յոհաննես Լեփսիուսի տուն-արխիվի հետ: ՀՅԹԻ-ին է հանձնվել համիդյան շրջանի (1895-1897 թթ.) հայկական կոտորածներին վերաբերող բացառիկ նշանակություն ունեցող թվայնացված արխիվը,
   - Կանադայի մարդու իրավունքների թանգարանի, Լեհաստանի Պիլեկի ինստիտուտի և Ավստրալիայի Դիկիենս համալսարանի ժամանակակից պատմությունների ուսումնասիրման խմբի հետ ձեռք է բերվել համաձայնություն 2020 թ. կազմակերպելու եռօրյա միջազգային գիտաժողով՝ “Children and Nation: Forcible Child Transfer and the Genocide Convention through Historical and Contemporary Lenses” խորագրով,
   - ICOM թանգարանային ցանցի մաս կազմող ICMEMO (International Committee of Memorial Museums in Remembrance of the Victims of Public Crimes) կազմակերպության 2020 թ. տարեկան գիտաժողովը գումարվելու է Երևանում:
6. Տեղեկատվական-իրազեկման աշխատանքների գծով գրանցվել են հետևյալ հիմնական արդյունքները.

- Կայքէջն այս տարի իր տեղադրած նյութերի ու ակտիվ քաղաքականության շնորհիվ ապահովել է առավելագույն մուտքերը՝ 3 մլն, որը չգերազանված արդյունք է,
- Մեկնարկել է «Կիսվի՛ր ընտանիքիդ պատմությամբ, փոխանցի՛ր հիշողությունդ սերունդներին» նախագիծը։

7. Տեխնիկական վերազինում և ֆինանսական աջակցություն
   - Սանկտ Պետերբուրգում բնակվող գործարար Հրաչյա Պողոսյանը նվիրատվության շնորհիվ գրադարանը վերազինվել է նորառաճ, հատուկ ռելսերի վրա հավաքված մետաղյա գրապահարաններով,
   - «Արևմտահայոց ազգային համագումար» միջազգային հասարական կազմակերպության նախագահ Սուրէն Սերայտարեանի նվիրատվության շնորհիվ թանգարանը համալրվել է չորս համակարգիչով, ևս երեք համակարգիչ գնվել է ՀՅԹԻ եկամուտների շնորհիվ,
   - Զալցբուրգի համալսարանի Քրիստոնյա Արևելքի հետազոտությունների կենտրոնի տնօրեն Յասմին Դում-Թրագուտը նվիրել է բարձրորակ սքանավորման սարք,
   - Հայաստանի կառավարության օժանդակությամբ մարվել է նախորդ տարիներից կուտակված ավելի քան 10 միլիոն դրամ պարտքը,
   - Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության ֆինանսական հովանավորության շնորհիվ կազմակերպվել է միջազգային գիտաժողով ու ժամանակավոր ցուցադրություն, հրատարկվելու է ժողովածու,
   - Երևանի կոնյակի գործարանի «Արարատ» թանգարանի նվիրատվության շնորհիվ թանգարանի մշտական ցուցադրության մեջ բացվել է պատկերասրահ,
   - Օգոստոս ամսից վճարովի էքսկուրսիաների համակարգի ներդրումը, թանգարանի գրախանութում գրքերի վաճառքից ստացված եկամուտները, նվիրատվությունների արկղում հավաքված գումարները նույնպես

նպատակաուղղվել են թանգարան-ինստիտուտի գործունեությանն առնչվող աշխատանքների իրականացմանը:

8. Աշխատանքների արդյունավետությանը նպաստել են նաև կառուցվածքային մի շարք փոփոխություններ ու ներքին կանոնակարգերի ներդրումը, հստակեցվել են բաժինների գործառույթները, ձևավորվել են նոր բաժիններ:
9. Փոքր աշխատակազմով իրականացվել է շուրջ 100 հա կազմող զբոսայգու կանաչապատման ու բարեկարգման աշխատանքները, տնվել է 760 ծառ: